Ացելբիա®

ռիտուքսիմաբ



Ինչ է պետք իմանալ
Ացելբիա դեղի մասին

Կարևոր անվտանգության տեղեկատվություն Ացելբիա® (ռիտուքսիմաբ) դեղով բուժվող պացիենտների համար

Ինչ է պետք իմանալ Ացելբիա դեղի մասին

- Այս գրքույկը պարունակում է միայն դեղի անվտանգության վերաբերյալ կարևոր տեղեկություն
- Կողմնակի ազդեցությունների վերաբերյալ ամբողջական տեղեկությունը ներկայացված է Ացելբիա դեղի ներդիր թերթիկում

Գրքույկի մասին

Այս գրքույկի տեղեկությունը նախատեսված է այն պացիենտների (կամ նրանց խնամողների) համար, որոնք ստանում են բուժում Ացելբիա դեղով: Խնդրում ենք ուշադիր կարդալ այս գրքույկը՝ դա կարևոր է, քանի որ Դուք պետք է իմանաք Ացելբիա դեղի օգտագործման ժամանակ օգուտների և վտանգների մասին:

Այս գրքույկը՝

- կպատասխանի Ձեր այն հարցերին, որոնք վերաբերում են Ացելբիա դեղի կիրառման հետ կապված հնարավոր ռիսկերին, ինչը կօգնի Ձեզ և Ձեր բժշկին հասկանալ՝ արդյոք Ձեզ ճիշտ բուժում է նշանակված
- կտեղեկացնի Ձեզ Ացելբիա դեղի մասին
- կտեղեկացնի, թե ինչ պետք է իմանալ մինչև Ացելբիայով բուժումն սկսելը
- կտեղեկացնի Ձեզ Ացելբիայի կողմնակի ազդեցությանների մասին, որոնք պետք է իմանաք (ներառյալ հազվադեպ հանդիպող, բայց լուրջ գլխուղեղի ախտահարումը, որը կոչվում է պրոգրեսիվող մուլտիֆոկալ լեյկոէնցեֆալոպաթիա (ՊՄԼ))
- կտեղեկացնի Ձեզ, թե որոնք են վարակի և ՊՄԼ-ի նշանները
- կտեղեկացնի Ձեզ, թե ինչ անել, եթե եթե կարծում եք, որ վարակ կամ ՊՄԼ ունեք
- կտեղեկացնի պացիենտի տեղեկատվական քարտի մասին

Ինչ է պետք իմանալ Ացելբիայի մասին

Ացելբիան ազդում է իմունային համակարգի վրա, ինչը կարող է մեծացնել վարակի կամ թաքնված վարակների դրսևորման հավանականությունը: Որոշ վարակներ կարող են լինեն ծանր և պահանջեն բուժում:

Ինչի համար է օգտագործվում Ացելբիան

Ացելբիան օգտագործվում է իմունային համակարգի տարբեր հիվանդությունների բուժման համար: Ացելբիայի օգտագործման վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարդացե՛ք դեղի կիրառման հրահանգը:

Ինչպես ընդունել Ացելբիան

Ացելբիան օգտագործվում է ներերակային կաթիլաներարկման ճանապարհով: Ինչպես բոլոր դեղերը, Ացելբիան նույնպես կարող է առաջացնել կողմնակի ազդեցություններ, թեև ոչ բոլոր պացիենտների մոտ և մեծամասամբ ոչ լուրջ:

- Եթե դուք ստանում եք Ացելբիա այլ դեղերի հետ զուգորդված, կողմնակի ազդեցությունները հնարավոր է պայմնավորված լինեն այլ դեղերով:
- Կողմնակի ազդեցության որոշ դեպքեր հնարավոր է լինեն ծանր և պահանջեն բուժում: Հազվադեպ որոշ անցանկալի կողմնակի ազդոցություններ կարող են լինել կյանքին վտանգ սպառնացող:

Եթե որևէ կողմնակի ազդեցություն դառնում է ծանր, խնդրում եք անմիջապես դիմեք բժշկի: Եթե Դուք ունեք այլ հարցեր, դիմե՛ք Ձեր բժշկին, դեղագետին կամ բուժքրոջը: Պահեք Ձեզ մոտ Ձեր բոլոր ընդունվող դեղերի ցանկը: Հնարավոր է այն պետք լինի ցույց տալ Ձեզ բժշկական օգնություն ցուցաբերող մասնագետին (օրինակ. բժիշկ, դեղագետ, բուժքույր կամ ատամնաբույժ):

Մինչև Ացելբիա ստանալը
Տեղեկացրե՛ք Ձեր բժշկին, եթե ունեք կամ երբեևէ ունեցել եք ստորև թվարկվածներից որևէ մեկը.

Վարակներ
Տեղեկացրե՛ք Ձեր բժշկին, եթե Դուք.

- ներկա պահին ունեք վարակ (նույնիսկ թեթև մրսածության նման): Ձեր բժիշկը, հնարավոր է խորհուրդ տա հետաձգել Ացելբիայի ներարկումը մինչև լիարժեք ապաքինումը
- ունեք կամ նախկինում ունեցել եք շատ վարակներ
- ունեցել եք կամ ունեք ծանր տուբերկուլոզ, արյան վարակ (սեպսիս) կամ որևէ այլ պատճառ, որը ընկճում է Ձեր իմունային համակարգը
- ունեք այնպիսի վիճակ, որը կարող է նպաստել բուժման ենթակա ծանր վարակի զարգացմանը

Այլ իրավիճակներ
Տեղեկացրե՛ք Ձեր բժշկին, եթե

- ունեք սրտանոթային հիվանդություններ
- շնչառության հետ կապված խնդիրներ
- հղի եք, կամ պատրաստվում եք հղիանալ, կամ կերակրում եք կրծքով
- ունեք կամ երբևէ ունեցել եք վիրուսային հեպատիտ կամ լայրդի որևէ այլ հիվանդություն
- ունեք, կամ ունեցել եք արյան կամ մեզի լաբորատոր հետազոտության տվյալների շեղումներ:

Դեղերի ընդունում

Տեղեկացրե՛ք Ձեր բժշկին, եթե

- ընդունում եք արյան ճնշումը կարգավորող դեղեր
- ստանում եք կամ երբևէ ստացել եք դեղեր, որոնք ազդում են Ձեր իմունային համակարգի վրա: Այս դեղերը հնարավոր է ընկճեն Ձեր իմունային համակարգը, այսպես կոչված “իմունաճնշիչներ” կամ քիմիաթերապևտիկ դեղեր:
- ստացել եք քիմիաթերապևտիկ դեղեր, որոնք հնարավոր է ազդեն Ձեր սրտի աշխատանքի վրա (կարդիոտոքսիկ քիմիաթերապիա)
- ստացել եք կամ ներկա պահին ստանում եք որևէ այլ դեղ, ներառյալ այն դեղերը, որոնք ձեռք են բերված դեղատնից կամ այլ բուհաստատություններից:

Պատվաստումներ

Մինչև Ացելբիայի ընդունումը տեղեկացրե՛ք Ձեր բժշկին, եթե կարծում եք, որ մոտ ժամանակահատվածում հնարավոր է պատվաստվելու անհրաժեշտություն լինի ՝ այդ թվում այլ երկրներ ճանապարհորդելու համար:
Որոշ պատվաստանյութեր չպետք է ներարկվեն Ացելբիայի հետ զուգահեռ կամ Ացելբիայի վերջին ներարկումից մի քանի ամիս անց: Ձեր բժիշկը մինչև Ացելբիա նշանակելը կստուգի, կա արդյոք որևէ պատվաստում ստանալու անհրաժեշտություն: Հայտնե՛ք Ձեր բժշկին, եթե վերը թվարկածներից որևէ մեկը վերաբերում է Ձեզ: Եթե վստահ չեք, խոսեք բժշկի հետ, նախքան Ացելբիա ստանալը:

Ացելբիայով բուժման ընթացքում կամ դրանից հետո

Ացելբիան ազդում է իմունային համակարգի վրա և կարող է մեծացնել Ձեր վարակվելու հավանականությունը: Որոշ վարակներ հնարավոր է լինեն ծանր և պահանջեն բուժում:

Վարակներ

Անմիջապես տեղեկացրե՛ք Ձեր բժշկին, եթե Դուք ունեք ստորև ներկայացված հնարավոր վարակի նշաններից որևէ մեկը.

- բարձր ջերմություն (տենդ)՝ դողով կամ առանց,
- երկարատև հազ,
- քաշի կորուստ,
- ցավ՝ վնասվածքի բացակայության դեպքում,
- ընդհանուր վատ ինքնազգացողություն, հոգնածություն, կամ թուլություն
- այրող ցավ միզելիս:

Գլխուղեղի լուրջ ախտահարում՝ Պրոգրեսիվող մուլտիֆոկալ լեյկոէնցեֆալոպաթիա (ՊՄԼ)

Շատ հազվադեպ Ացելբիան կարող է առաջացնել գլխուղեղի լուրջ ախտահարում, որը կոչվում է պրոգրեսիվող մուլտիֆոկալ լեյկոէնցեֆալոպաթիա կամ ՊՄԼ, ինչը հնարավոր է հանգեցնի ծանր հաշմանդամության կամ կյանքին վտանգ սպառնացող լինել:

ՊՄԼ-ն հարուցվում է վիրուսով: Հիմնականում առողջ մեծահասակների մեծամասնության մոտ այս վիրուսը մնում է ոչ ակտիվ, և հետևաբար՝ անվնաս: Որոշ մարդկանց մոտ իմունային համակարգի թուլացման պատճառով վիրուսն ակտիվանում է և առաջացնում հիվանդություն:

Անմիջապես տեղեկացրե՛ք Ձեր բժշկին, եթե ունեք ՊՄԼ -ի հետևյալ նշաններից որևէ մեկը.

- գիտակցության մթագնում, հիշողության կորուստկոգնիտիվ խանգարումներ
- հավասարակշռության կորուստ , խոսելու կամ քայլելու խնդիրներ
- մարմնի մկանային ուժի միակողմանի նվազում կամ թուլություն
- տեսողության վատացում կամ կորուստ

Անմիջապես տեղեկացրե՛ք Ձեր բժշկին, եթե Դուք ունեք ՊՄԼ-ի այս նշաններից որևէ մեկը Ացելբիայով բուժման ժամանակ կամ դրա վերջին ներարկումից հետո 2 տարվա ընթացքում:

Պացիենտի տեղեկատվական քարտ

Պացիենտի տեղեկատվական քարտը պարունակում է դեղի անվտանգության վերաբերյալ կարևոր տեղեկություն, որը Դուք պետք է իմանաք մինչև Ացելբիա ստանալը, դրա կիրառման ընթացքում կամ հետո:

- Ձեր բժիշկը պետք է Ձեզ տրամադրի Ացելբիայի վերաբերյալ տեղեկատվական քարտն ամեն անգամ՝ ներակումից առաջ:
- Միշտ Ձեզ մոտ պահե՛ք տեղեկատվական քարտը: Դուք կարող եք պահել այն ձեր դրամապանակում կամ պայուսակի մեջ:
- Ցույց տվե՛ք Պացիենտի տեղեկատվական քարտը Ձեզ բժշկական օգնություն ցուցաբերող ցանկացած մասնագետի: Դա կարող է լինել ոչ միայն Ացելբիա նշանակող բժիշկը, այլ նաև ցանկացած բժիշկ, բուժքույր, դեղագետ կամ ատամնաբույժ:
- Տեղեկացրեք Ձեր ընտանիքի անդամներին, ամուսնուն կամ խնամողին Ձեր բուժման մասին և ցույց տվեք Պացիենտի տեղեկատվական քարտը, քանի որ նրանք կարող են նկատել նշաններ, որոնց Դուք ուշադրություն չեք դարձրել:

Պահեք Պացիենտի տեղեկատվական քարտը Ձեզ մոտ Ացելբիայի վերջին դեղաչափը ստանալուց հետո երկու տարի: Դա անհրաժեշտ է, քանի որ Ացելբիայի ազդեցությունը իմունային համակարգի վրա կարող է տևել մի քանի ամիս, և անցանկալի կողմնակի ազդեցություններ կարող են ի հայտ գալ նույնիսկ այն ժամանակ, երբ այլևս չեք ընդունում դեղը:


BICCAD
Biotechnology Company